

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 2

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝

2015 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2014-15 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում:
2. Ֆակուլտետային նոր կանոնակարգի քննարկում և հաստատում:
3. Ուսանողական գիտական ընկերության հերթական նստաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը ֆակուլտետում:
4. Համալսարանի 100-րդ տարեդարձին նվիրված միջոցառումների առաջարկների քննարկում:
5. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը: Իր խոսքի սկզբում նա, ողջունելով գիտխորհրդի անդամներին, հայտնեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 29 անդամներից այս պահին նիստին մասնակցում են 23-ը, ապահովված է անհրաժեշտ քվորումը: Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց գիտխորհրդի օրակարգը:

1-ին հարցի առիթով արտահայտվեցին պրոֆ. Ա. Ավագյանը և դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը: Վերջինս մասնավորապես նշեց, որ 2014-15 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքներն արդեն լավել են նախորդ նիստում, և այժմ խոսքը վերաբերում է լուծարքներին: Թեև 3-4 ուսանողներ ներկայացվել են հեռացման՝ մի մասը բացակայությունների, մյուս մասը ուսման վարձը չմուծելու պատճառով, այնուամենայնիվ պատկերը հիմնականում բավարար է: Այն, սակայն, չի կարելի անվանել գոհացուցիչ, քանի որ քննություններ հանձնած ուսանողների մեծ մասի միավորները տատանվում են 8-10-ի սահմաններում:

Բացի այդ՝ զեկուցողը խոսեց մի մտահոգության մասին, այն է՝ մեծ դժգոհություններ կան «Հայ ժողովրդի պատմություն» առարկայի դասախոսների՝ 2 հոսքերի ուսանողներին նշանակած քննական միավորների կտրուկ տատանումների առիթով:

Դեկանատի ուսումնասիրությունը ևս դրա մասին է խոսում, և պատրաստվում են այդ հարցի շրջանակներում խոսել պատմության ֆակուլտետի ղեկավարության հետ:

2-րդ հարցի՝ ֆակուլտետային նոր կանոնակարգի քննարկման ու հաստատման առիթով պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ ԵՊՀ-ի՝ «հիմնադրամ» դառնալու հետևանքով տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ. կանոնակարգի նախագիծը շուտով կուղարկվի բոլոր ամբիոններին, հաշվի կառնվեն դիտողությունները, և այնուհետև կանոնակարգը կդրվի հաստատման: Գիտխորհրդի նախագահը շեշտեց, որ կատարվել են էական 2 փոփոխություններ՝ 1. ֆակուլտետում այսուհետ կգործի միայն մեկ գիտխորհուրդ, քանի որ վերացել է «ընդլայնված խորհուրդ» հասկացությունը, 2. նոր գիտխորհուրդը կկազմավորվի հետևյալ հարաբերակցությամբ՝ 50% ի պաշտոնե, 50% դրսից, ընդ որում՝ 25%-ը ուսանողներից:

Գիտխորհուրդն այնուհետև անդրադարձավ օրակարգի **3-րդ հարցին՝** ֆակուլտետում ուսանողական գիտական ընկերության հերթական նստաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքին: Այդ առիթով ձայնը տրվեց ՈԻԳԸ նորընտիր նախագահ Մարիանա Բոցինյանին: Նա հատուկ շեշտեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի ՈԻԳԸ-ն առաջատարներից մեկն է համալսարանում, նախկինում արժանացել է խրախուսանքների, և այժմ էլ ջանքեր չպետք է խնայվեն՝ պահպանելու համար լավագույն ավանդույթներն ու հասնելու նոր՝ ավելի գոհացուցիչ արդյունքների: Մ. Բոցինյանն այնուհետև տեղեկացրեց, որ արդեն քննարկման փուլում են 1-ին կիսամյակի թեմաները, ընտրվում են լավագույն զեկուցումները, իսկ արդյունքների մասին կտեղեկացվեն առաջիկա նիստերից մեկում:

Օրակարգի **4-րդ հարցը՝** ԵՊՀ-ի 100-րդ տարեդարձին նվիրված միջոցառումների առաջարկների քննարկումը, անցավ բավական աշխույժ մթնոլորտում: Ամբիոնների վարիչներն իրենց ելույթներում ընդգծեցին նշյալ հոբելյանի կարևորությունը ոչ միայն համալսարանի, այլև ընդհանրապես ամբողջ հանրապետության կյանքում և խոստացան առաջիկայում ներկայացնել խելամիտ ու նպատակասլաց առաջարկներ:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Աննա Աբաջյանի՝ «Հայերենի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ» մենագրության վերահրատարակման թույլտվության հարցը:

Ելույթ ունեցողները՝ պրոֆ. Ա. Ավագյանը և դոց. Ն. Դիլբարյանը, նշեցին, որ Ա. Աբաջյանի հիշյալ գիրքն ունի պահանջարկ ուսանողների և մասնագետների շրջանակում, ուստի այն կարիք ունի վերահրատարակման:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ, Բ. Գ. դ., պրոֆ. Աննա Աբաջյանի՝ «Հայերենի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ» մենագրությունը թույլատրել վերահրատարակման:

բ/ ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի ասիստենտ Ռուզաննա Սերժիկի Շաբոյանի թեկնածուական ատենախոսության գիտական նոր դեկավարի հաստատման հարցը:

Արտահայտվողները՝ պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Լ. Հովսեփյանը և Ա. Աբաջյանը, նշեցին, որ Ռուզաննա Շաբոյանի թեկնածուական ատենախոսության («Սմբատ Սպարապետի երկերի բառապաշարը») գիտական դեկավար է եղել պրոֆ. Ռ. Ղազարյանը, որը մահացել է 2011-ին: Այժմ կարիք կա նշանակելու գիտական նոր դեկավար, և նպատակահարմար է առաջադրել Ա. Աբաջյանի թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի ասիստենտ Ռուզաննա Սերժիկի Շաբոյանի թեկնածուական ատենախոսության գիտական նոր դեկավար հաստատել պրոֆ. Աննա Աբաջյանին:

գ/ ԵՊՀ մանկավարժության ամբիոնի հայցորդ Աննա Հովակիմյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը և դոցենտ Գ. Բաբայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մանկավարժության ամբիոնի հայցորդ Աննա Հովակիմյանի թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ “Особенности социально-педагогической работы с подростками отклоняющим поведением” («Սոցիալ-մանկավարժական աշխատանքի առանձնահատկությունները շեղվող վարքով դեռահասների հետ») (ԺԳ. 00. 01):

դ/ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մանկավարժության ամբիոնի վարիչ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Վաչիկ Բրուտյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական խորհրդատուի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը և դոց. Գ. Բաբայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Վաչիկ Բրուտյանի դոկտորական ատենախոսության թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «Իրավաբանական մանկավարժության հայեցակարգային հիմքերը» (ԺԳ. 00. 01):

2. Գիտական խորհրդատու նշանակել մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ. Նազիկ Կարապետի Հարությունյանին:

Ե/ ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի պատրաստած՝ «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի գործնական առաջադրանքների ձեռնարկ»-ը (տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանողների համար), (հեղինակներ՝ Անահիտ Ադիլխանյան, Կարինե Միքայելյան, Անահիտ Մանուկյան) տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, դոց. Ա. Ադիլխանյանը, դոց. Լ. Թելյանը և դոց. Ա. Սարգսյանը:

Նշվեց, որ ձեռնարկն ամբողջովին համապատասխանում է «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» առարկայի տեսական դասընթացի ծրագրին: Ձեռնարկում ընդգրկված են առաջադրանքներ հայոց լեզվի բոլոր բաժիններից՝ հնչյունաբանություն, բառագիտություն, քերականություն, ինչպես նաև խոսքի մշակույթից՝ խոսքի դրսևորման ձևեր, խոսքի արժանիքներ ու թերություններ, պատկերավորման և արտահայտչական միջոցներ: Ձեռնարկը տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանողներին կօգնի ամրապնդելու իրենց տեսական գիտելիքները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հիմք ընդունելով նիստի մասնակիցների կարծիքները՝ «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի գործնական առաջադրանքների ձեռնարկ»-ը (տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանողների համար) երաշխավորել տպագրության:

Վերջում գիտխորհրդի նախագահ պրոֆ. Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին և նիստը հայտարարեց ավարտված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ